ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒԼԻՍԻ 2014թվականի N 20-Ա

«ԱՅՆԹԱՊԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ԱՅՆԹԱՊԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. «Այնթապի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վերակազմավորման ձևով վերակազմակերպել որպես «Այնթապի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչառևտրայինկազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ):
2. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն ընդունել «Այնթապի բժշկական ամբուլատորիա» համայնքային հաշվեկշիռ՝ համաձայն հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված 1):
3. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն համաձայն Հավելված 1-ի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Այնթապ համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:
4. Ընկերության տնօրինության տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ շենքի ու շինությունների, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել ՀՈԱԿ-ին՝ որպես իրավահաջորդի:
5. Հաստատել՝
   ա/ ՀՈԱԿ-ի գույքի կազմը՝ համաձայն Հավելված 2-ի:
   բ/ ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի:
6. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել ՀՈԱԿ-ի պետականգրանցումը՝ Ընկերության միջոցների հաշվին:
7. Կազմակերպությանկառավարման,ինչպեսնաև«Պետականոչառևտրայինկազմակերպություններիմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13րդ հոդվածի 2րդ կետի «է» ենթակետով 14րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Այնթապ համայնքի ղեկավարին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ
2. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ
4. ՀԱՍԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ
6. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ
7. ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՍԵՆ
8. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ
9. ՍԱՀԱԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ